



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

---

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՁԵԿՈՒՅՑ-  
ՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱ-  
ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 նոյեմբերի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1693-Ա որոշմամբ հավանություն է տվել 2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի հունվարի 27-ին՝ միջազգային հարկային թափանցիկության բարձրացման, ինչպես նաև կողմ հանդիսացող պետությունների համապատասխան հարկային մարմինների եկամտի գլոբալ բաշխման, վճարված հարկերի և հարկային իրավագործությունների շարքում տնտեսական գործունեության տեղակայման որոշակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարելավման նպատակով:

2. Համաձայնագրի 5-րդ բաժնի 1-ին պարբերությամբ սահմանվում է, որ փոխանակված բոլոր տեղեկությունների վրա տարածվում են գաղտնիության կանոնները և «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի կամ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության

մասին» կոնվենցիայի արձանագրությամբ փոփոխված կոնվենցիայով (այսուհետ՝ «Կոնվենցիա») նախատեսված այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները:

Համաձայնագրի 8-րդ բաժնի 6-րդ պարբերությամբ սահմանված կարգով իրավասու մարմնի կողմից իր մասնակցությունը Համաձայնագրին դադարեցնելու պարագայում Համաձայնագրի շրջանակներում նախկինում ստացված բոլոր տեղեկությունները շարունակում են լինել գաղտնի, և դրանց նկատմամբ գործում են Կոնվենցիայի պայմանները:

**3.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

**3.1.** ապահովել, որ Կոնվենցիայի 6-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածների դրույթների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն ամեն տարի ավտոմատ հիմունքներով փոխանակի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող յուրաքանչյուր հաշվետվություն ներկայացնող սուբյեկտից ստացված ըստ երկրների (ԸԵ) զեկույցը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում հարկային նպատակներով ռեզիդենտ է Հայաստանի Հանրապետության բոլոր այլ այդպիսի իրավասու մարմինների հետ, որոնց համար Համաձայնագիրը գործում է, և որտեղ ԸԵ զեկույցում նշված տեղեկությունների հիման վրա հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի բազմազգ ձեռնարկությունների (ԲԱՁ) խմբի մեկ կամ մեկից ավելի բաղկացուցիչ սուբյեկտները կա՛մ ռեզիդենտ են հարկային նպատակներով, կա՛մ ենթակա են հարկման մշտական հաստատության միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մասով (բաժին 2, պարբերություն 1),

**3.2.** ապահովել, որ Համաձայնագրի 2-րդ բաժնում նշված տեղեկությունների փոխանակման նպատակներով՝ նշվի ԸԵ զեկույցում ներառված գումարների արժույթը (բաժին 3, պարբերություն 1),

**3.3.** ինչ վերաբերում է Համաձայնագրի 2-րդ բաժնի 1-ին պարբերությանը, ապա ապահովել, որ ԸԵ զեկույցը նախ փոխանակվի ԲԱԶ խմբի հարկաբյուջետային տարվա մասով, որն սկսվում է իրավասու մարմնի կողմից Համաձայնագրի 8-րդ բաժնի 1-ին պարբերության «ա» ենթապարբերության համաձայն ներկայացված ծանուցման մեջ նշված օրվանից կամ դրանից հետո, հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան այդ հարկաբյուջետային տարվա վերջին օրվանից 18 ամիս հետո: Չնայած վերոնշյալին՝ ԸԵ զեկույցը պահանջվում է փոխանակել, եթե միայն Համաձայնագիրը գործում է երկու իրավասու մարմինների համար էլ, և նրանց համապատասխան պետություններն ունեն գործող օրենսդրություն, որով պահանջվում է ԸԵ զեկույցները ներկայացնել այն հարկաբյուջետային տարվա մասով, որին վերաբերում է ԸԵ զեկույցը, և որը համապատասխանում է Համաձայնագրի 2-րդ բաժնում նախատեսված փոխանակման շրջանակին (բաժին 3, պարբերություն 2),

**3.4.** ապահովել, որ Համաձայնագրի 3-րդ բաժնի 2-րդ պարբերության համաձայն՝ ԸԵ զեկույցը փոխանակվի հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան ԲԱԶ խմբի այն հարկաբյուջետային տարվա վերջին օրվանից 15 ամիս անց, որին վերաբերում է ԸԵ զեկույցը (բաժին 3, պարբերություն 3),

**3.5.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն ԸԵ զեկույցներով ավտոմատ փոխանակվեն Գծանշումների ընդլայնվող լեզվով միասնական սխեմայի միջոցով (բաժին 3, պարբերություն 4),

**3.6.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն աշխատեն և համաձայնեցնեն տվյալների էլեկտրոնային փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդ, այդ թվում՝ գաղտնագրման չափանիշները՝ ստանդարտացումն առավելագույնի հասցնելու և բարդություններն ու ծախսերը նվազագույնի հասցնելու համար, և համակարգող մարմնի քարտուղարությանը ծանուցեն այդ ստանդարտացված փոխանցման և գաղտնագրման մեթոդների մասին (բաժին 3, պարբերություն 5),

**3.7.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ծանուցի մյուս իրավասու մարմնին, երբ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաշվետվություն ներկայացնող այն սուբյեկտի առնչությամբ, որը հարկային նպատակներով ռեզիդենտ է մյուս իրավասու մարմնի տարածքում, հիմքեր ունենա կարծելու, որ սխալը կարող է հանգեցրած լինել տեղեկությունների սխալ կամ թերի հաղորդման կամ, որ առկա է հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի կողմից ԸԵ զեկույց ներկայացնելու իր պարտավորության չկատարում, իսկ որպես վերոհիշյալ ծանուցում ստացած կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ձեռնարկի Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ հասանելի համապատասխան միջոցները՝ ծանուցման մեջ նկարագրված սխալները կամ չկատարումները վերացնելու համար (բաժին 4),

**3.8.** փոխանակված բոլոր տեղեկությունների վրա տարածել գաղտնիության կանոնները և Կոնվենցիայով նախատեսված այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները (բաժին 5, պարբերություն 1),

**3.9.** երաշխավորել, որ ԸԵ զեկույցի միջոցով ստացված տեղեկություններն օգտագործվեն բարձր տրանսֆերային գնագոյացման, բազայի քայքայման և շահույթի տեղափոխման հետ կապված ռիսկերը գնահատելու համար և անհրաժեշտության դեպքում, տնտեսական և վիճակագրական վերլուծության համար, ինչպես նաև երաշխավորել, որ տեղեկությունները չեն օգտագործվի որպես գործառության համբողջական վերլուծության և համադրելիության ամբողջական վերլուծության հիման վրա առանձին գործարքների տրանսֆերային գնագոյացման և գների մանրամասն վերլուծությանը փոխարինող (բաժին 5, պարբերություն 2),

**3.10.** ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ, անհապաղ ծանուցի համակարգող մարմնի քարտուղարությանը Համաձայնագրի 5-րդ բաժնի 1-ին և 2-րդ պարբերությունների պահանջները չկատարելու ցանկացած դեպքի, այդ թվում՝ ցանկացած պաշտպանության միջոցի, ինչպես նաև վերոնշյալ պարբերությունների պահանջները չկատարելու մասով ձեռնարկված ցանկացած միջոցի մասին (բաժին 5, պարբերություն 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի հունվարի 27-ին ստորագրված «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

21 նոյեմբերի 2023 թվականի  
ՍԴՈ-1702